«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ «Էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում»

Առարկան՝ Դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Զարինե Նիկողոսյան

Ուսումնական հաստատություն՝ք.Մասիս 3-րդ հիմնական դպրոց

Երևան 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ----------3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ----------5

ԳԼՈՒԽ 1

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄՈՏԻՎԸ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ՎԻՊԵՐԳՈՒՄ----------6

ԳԼՈՒԽ 2

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԷՊՈՍԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ----------11

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ----------15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ----------17

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Մեզ համար թանկ են երեխաները, մերձավոր ազգականները, բայց որևէ բանի նկատմամբ սիրո բոլոր պատկերացումները միավորված են մեկ բառի շուրջ՝ հայրենիք:

ՑԻՑԵՐՈՆ

Այսօր անկախ Հայաստանում ազգային բովանդակությամբ կրթություն է իրականացվում, և դպրոցն է որոշում կրթության ազգային բովանդակությունը:Դպրոցում դասավանդվող բոլոր առարկաների մեջ մայրենի լեզուն յուրահատուկ դեր ունի: Մայրենի լեզուն կրթության լեզուն է:

Մայրենի լեզվի իմացությունը բազմաբնույթ գիտելիքներ ձեռք բերելու, մշակութային արժեքներին հաղորդակից դառնալու, սեփական ստեղծագործական ունակությունները դրսևորելու բացառիկ միջոց է:

Մայրենի լեզվի ուսուցիչը կոչված է լուծելու կրթական առաջնահերթ խնդիրներ.

1. Իրականացնել՝
   - ●նպատակաուղղված ակտիվ ուսուցում.
   - ●սերտ հաղորդակցություն ազգային մշակույթի և նրա միջոցով համաշխարհային մշակույթի հետ.արդի հասարակության մեջ ազատ ու նպատակահարմար հաղորդակցություն՝ կյանքի բոլոր բնագավառներում խոսքային գործունեություն ծավալել կարողանալու իմաստով:
2. Ապահովել՝
   - ●լեզվի անթերի իմացություն.
   - ●մայրենի լեզվի առանձնահատուկ դեր՝ արժեքային համակարգի, սովորողի ազգային նկարագրի ու բարոյական կերպարի ձևավորման գործում:

Հայ երեխայի մեջ անհատապաշտական ոգին ուժեղ է արտահայտված: Այս առումով հանրակրթության ոլորտում մենք առավելապես սոցիալական անհատների և սոցիալական բնավորության ձևավորման խնդիր ունենք: Ուսուցիչը չպետք է անտեսի այս պարագան և ամեն կերպ սատարի մատաղ սերնդի մեջ հայրենասիրության ոգու արթնացմանն ու ծավալմանը: Մեր հայրենիքը, մեր լեզուն ու հավատը, մեր մշակութային գանձերը, մեր գիտնականներն ու արվեստագետները, մեր ռազմական գործիչներն ու մեր հերոսները պետք է ամենաբազմազան ձևերով և բազմակողմանիորեն ներկայանան տարբեր ուսումնական նյութերում, դասերի կազմակերպման մեջ, պատի թերթերում և այլուր:

Մայրենիի ուսուցիչը լավագույնս կարող է իրականացնել հայրենասիրական դաստիարակություն և ազգային արժեհամակարգի ձևավորում:

Հայրենասիրությունը ծագում է լատիներեն պատրիոտ բառից, նշանակում է՝ հայրենիքը սիրող: Հայրենասիրությունը բարոյական բարձր որակ է: Այն սոցիալական դիրքորոշում է , որի հիմնական բաղադրիչը սերն է: Մարդու հայրենասիրությունը հանդես է գալիս և մարմնավորվում տվյալ մարդու՝ դպրոցականի, դեպի իր հայրենիքն ունեցած սիրո մեջ:

Ցանկացած մարդու համար իր հայրենիքը սկսվում է իր տնից , իր բակից, իր այգուց: Հայրենիքը սկսվում է իր երկրի մի թիզ հողից, մի կում ջրից , մի կտոր երկնքից: Եվ ամենակարևորը՝ իր մայրենի լեզվից: Եթե այս ամեն մարդը չի հասկանում, ապա հայրենիք հասկացությունը նրա համար կդառնա մի ինչ-որ անորոշություն:

Դպրոցը, ուսուցիչները, ծնողները պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները: Պարտավոր են նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ: Անկախ տարիքից , հասարակության մեջ պետք է սեր դաստիարակել հարազատ վայրերի , իրենց գյուղի, ավանի, քաղաքի, հայրենի բնաշխարհի նկատմամբ: Դաստիարակել հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն, փաստացի օրինակներով երեխաների մեջ ամրապնդել սերը ժողովրդի նկատմամբ: Ինչը մենք կանենք մեր էպոսի և նրա հերոսների միջոցով:

Հետազոտության նպատակն է՝ բացահայտել էպոսի դերը հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում:

Հետազոտության խնդիրներն են՝

ուսումնասիրել թեմային վերաբերող գրականությունը,

սահմանել քայլարշավ նպատակին հասնելու համար,

առանձնացնել արդյունավետ մեթոդներ էպոսի միջոցով հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Էպոսի համահավաք բնագիրը ստեղծվել է Մանուկ Աբեղյանի, Գևորգ Աբովի և Արամ Ղանալանյանի ջանքերով:Համահավաք բնագրի հիմքում ընկած է Գարեգին Սրվանձտյանցի գրառած պատումը, որը հարստացվել է տարբեր պատումներից քաղված էական մանրամասներով: Համահավաք բնագիրն է թարգմանվել ռուսերեն, Խորհրդային Միության տարբեր ժողովուրդների, ֆրանսերեն, անգլերեն և այլ լեզուներով:

Աշխարհի նշանավոր էպոսները մշակվել են: Հունական էպոսը մշակել է Հոմերոսը, և այսօր այն հայտնի է «Իլիական » և «Ոդիսական» գրքերով, պարսկական էպոսը մշակել է Ֆիրդուսին «Շահ-Նամե» խորագրով, Շառլ դե Կոստերը մշակել է ֆլամանդական էպոսը՝ «Տիլ Ուլենշպիգելը»: Կան նաև ուրիշ էպոսների մշակումներ: Հայ ժողովրդական էպոսը հնում չի մշակվել: Այն նոր օրերին հասել է բանահյուսական տեսքով: Առաջինը մեր էպոսը մշակել է Հովհաննես Թումանյանը: Հետո մշակել են շատերը՝ Ավետիք Իսահակյան, Եղիշե Չարենց, Նաիրի Զարյան, Հավհաննես Շիրազ, Աաշոտ Շայբոն և ուրիշներ: Բոլոր մշակումների մեջ ամենաուշագրավը Հովհաննես Թումանյանի մշակումն է՝ «Սասունցի Դավիթը» , որը զարմանալիորեն հարազատ է բանահյուսական օրինակին:

ԳԼՈՒԽ 1

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄՈՏԻՎԸ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ՎԻՊԵՐԳՈՒՄ

Հայ ժողովրդական բանահյուսության հնամենի գանձերին անդրադառնալիս տեսնում ենք նրա ամենամեծ արժեքը՝ «Սասնա ծռեր» վիպերգը, որի իր ճյուղերից մեկի անունով հայտնի է որպես «Սասունցի Դավիթ էպոս »: Այս վիպերգի փառքը ավելի է տարածվում աշխարհով մեկ և արժանանում է միջազգային ճանաչման ու գնահատանքի:

Էպոսն իր հիմնական բովանդակությամբ արտացոլում է Հայաստանում մոտ 250 տարի տևած արաբական լուծը: Էպոսի ընդգրկված ժամանակահատվածը VII-X դարերն են: Սակայն էպոսի պատումների ստեղծումը կապվում է ավելի ուշ ժամանակների հետ[1]: Վիպերգի հիմքում ընկած են բազմաքանակ ապստամբություններ, որոնք հայերը մղել են արաբական խալիֆաթի նվաճողական քաղաքականության դեմ: Ապստամբություններից մեկը մեզ է հասել խութեցիների ապստամբություն անունով: Խութեցիների ըմբոստացումը տեղի է ունեցել 851 թվականին Հովհանի գլխավորությամբ: Խութեցիները հաղթել են արաբներին և սպանել Յուսոֆ (Հովսեփ) ոստիկանապետին: Այդ մասին մանրամասն պատմում է Թովմա Արծրունին իր «Պատմություն Արծրունյաց տան» մատյանում :

Էպոսի առաջին գրառողը, որը նաև հայ էպոսագիտության հիմնադիրն է, Գարեգին Սրվանձտյանցը մեր ազգային վիպերգի առաջին ճյուղը կապում է նախաքրիստոնեական ժամանակների հետ: Ասորեստանի Սենեքերիմ թագավորը իր Ադրամելիք և Սանասար որդիներին պետք է զոհ մատուցեր կուռքերին, սրանք էլ սպանեցին իրենց հորը և փախան եկան Սասուն: Էպոսի մեջ այս դեպքերը դարերի հեռավոր արձագանքով հասել են մինչև XIX դարի վերջը և XX դարի սկիզբը՝ մինչև էպոսի գրառումները:

Էպոսն առաջին անգամ գրառել է հայ բանագիտության մեծ երախտավոր Գարեգին Սրվանձտյանցը: Նա լսել էր մեր ազգային վիպերգի գոյության մասին և երեք տարի եռանդագին որոնում էր , մինչև գտավ առաջին ասացողին՝ Մշո դաշտի Առնիստ գյուղի բնակիչ Կրպոյին , որին խնամել է,խրախուսել, և վերջինս պատմել ՝ մեր վիպերգը՝ խոստովանելով , թե իր պատմածը թերի է, իր վարպետը ավելի երկար էր պատմում, և նրա ասքը շատ տեղերում ընդհատվում էր երգերով:

Գարեգին Սրվանձտյանցը իր գրառած պատումին կցել է բանասիրական բացատրություններ, պատմական ճշգրտումներ, դավանաբանական մեկնություններ, որոնք ընդունվեցին հետագա էպոսագետների կողմից:

[1] Գ. Սրվանձտյանց, Երկեր, հ. 1, Երևան, 1978,էջ 86,

Գարեգին Սրվանձտյանցը էպոսին կցված առաջաբանում ցավով խոսում է նաև իր ժամանակներում նման գործերի նկատմամբ եղած անտարբերության մասին, նա մտավախություն ունի , թե «Գրոց եւ բրոց» գրքույկը ու իր անձը կունենան արհամարհողներ, սակայն իրեն քաջալերված կհամարի, եթե համրանքով գեթ քսան հոգի հավանեն իր գործը, և կշարունակի բանագիտական իր գործունեությունը՝ խրախույս կարդալով ուրիշներին, որ հետևեն իրեն, աշխատասիրություն ձեռք բերեն և հրատարակեն նման գրվածքներ:

Հաղթեց բանագետի համառ կամքը, և նրա լուսավոր ճանապարհով ընթացան նոր բանահավաքներ և էպոսագետներ: Դրանցից են Մանուկ Աբեղյանը, Երվանդ Լալայանը, Սարգիս Հայկունին, Կարո Մելիք-Օհանջանյանը, Սարգիս Հարությունյանը և ուրիշներ:

«Սասունցի Դավիթ» էպոսի առաջին գրառումը լույս է տեսել 1874-ին «Գրոց եւ Բրոց, Սասունցի Դավիթ և Միեր» խորագրով:

1930-ական թվականներին հայ էպոսագիտությունը մտնում է իր զարգացման նոր փուլը: էպոսագետներ Մ. Աբեղյանի և Կ. Մելիք-Օհանջանյանի ջանքերով մինչ այդ հրատարակված 47 տարբերակները ամփոփվում են երեք ստվարածավալ հատորների մեջ և հրատարակվում 1936,1944,1951 թվականներին:

1939 թվականին հրատարակվում է «Սասունցի Դավիթ» էպոսի համահավաք բնագիրը(կազմողներ՝ Մ. Աբեղյան, Գ. Աբով, Ա. Ղանալանյան), և Խորհրդային Միության մեջ մեծ հանդիսավորությամբ նշվում է հայ ժողովրդական հերոսական էպոսի 1000-ամյա հոբելյանը: Համահավաք բնագրի առաջաբանը գրել է նշանավոր հայագետ Հովսեփ Օրբելին:

«Սասնա ծռեր» վիպերգն իր մեջ պարունակում է հայ ժողովրդի ազգային երազանքները: էպոսը՝ որպես գրական տեսակ, աչքի է ընկնում իր խոր պատմականությամբ և շեշտված ազգային բովանդակությամբ: Ամեն ժողովրդի էպոս տվյալ ազգի անձնագիրն է, նրանով նա իրավունք ունի ներկայանալու աշխարհին: Մեր էպոսը խորապես ազգային է , նրանում երևում են մեր ազգային բնավորության հիմնական գծերը:

Մեր էպոսը տոգորված է ջերմ հայրենասիրությամբ: Հայրենասիրության առաջին օրինակը ցուցադրում է էպոսի դյուցազունների մայրը՝ Ծովինարը, որը Հայոց Գագիկ թագավորի դուստրն է:

Արաբական խալիֆը հարկի դիմաց պահանջում է Ծովինարին: Գագիկ թագավորը սարսափում է այդ մտքից, որովհետև արաբական խալիֆը քրիստոնյա չէր: Սկսում են քննարկել տարակարծությունները, որովհետև մերժման դեպքում խալիֆը սպառնում է ավերել Հայոց աշխարհը: Իր հորը ծանր կացությունից փրկում է Ծովինարը. նա բացատրում է իր անձնազոհության կարևորությունը և համոզում է հորը.

- Որ ես էն կռապաշտ թագավոր չառնեմ,
  Զամեն տի սպանի իմ պատճառով,
  Աղեկն էն է, ես էրթամ,
  Ուրիշ մարդու թող բան չլընի:

Հայրենասիրական այս արմատից են ծնվում Սասնա դյուցազունները և իրենց գործերով ապացուցել են անսահման նվիրվածությունը հայրենի հողի և նրա սրբությունների նկատմամբ: Էպոսի բոլոր ճյուղերի հանգուցակետը երրորդն է՝ Սասունցի Դավթի ճյուղը, և, իհարկե, ամենահայրենասիրականը: Դավթին հաջողվում է ոչ միայն ազատել հարկերից Սասունը՝ Հայաստանը, այլև դուրս քաշել օտար զավթիչներին իր հողից:

Մեր ազգային վիպերգը փառաբանում է աշխատանքը, աշխատավոր մարդուն: Էպոսի գլխավոր հերոսները միշտ օգնում են գյուղացիներին, բոլոր խեղճ մարդկանց: Իրենց բերդը կառուցելուց առաջ Սանասարը և Բաղդասարը նախ տներ են կառուցում հասարակ մարդկանց համար.

- Առաջ շինենք զէդոնց տներ,
  Ու նոր շինենք զմեր բերդ.

Իրենց կառուցած հզոր բերդի անունն էլ Սանասարը և Բաղդասարը դնում են ըստ մի ծեր պապիկի բնորոշման՝ Սասուն: Սանասարն ու Բաղդասարը Հայոց Գագիկ թագավորի թոռներն էին, սակայն իրենց վարքագծով նրանք տարբերակում չեն դնում տոհմիկ արքայազնի և հասարակ ու պարզ մարդկանց միջև, շարունակ մտածում են ուրիշների մասին, պարգևում նրանց իրենց հոգատարությունն ու ջերմությունը:

«Սասնա ծռեր» վիպերգում դյուցազունները պայքարում են ոչ միայն արտաքին նվաճողների դեմ, այլև հանուն երկրի ներքին կյանքի արդարության: Նրանք չեն հանդուրժում գերհարուստ վիշապներին և դևերին, խլում են հարստությունը նրանցից և հալալ ձևով բաժանում հողի աշխատավորներին:

Երկրորդ ճյուղի գլխավոր հերոսը՝ Միհրը, իր քաջագործությունը կատարում է հանուն իր երկրի ժողովրդի: Նա սպանում է Սասուն եկող հացի ճանապարհը փակող առյուծին և կոչվում է Առյուծաձև Միհր, այսինքն՝ առյուծ պատռող Միհր:

Մեր էպոսում կա մի խորհրդանշական իմաստ պարունակող դրվագ: Դավիթը վերաշինում է իր հոր Մարութա վանքը, սակայն վանքի կառույցը շարունակ քանդվում է: Գիշերը երազում Դավթին երևում է Աստվածածինը և պատվիրում վանքի պատի մեջ դնել Դավթի սուրը: Այդպես էլ անում են, և վանքը մնում է կանգուն: Վիպերգի այս դրվագում իմաստավորված է հայ ժողովրդի դարավոր կենսափորձը. ամեն երկրի ստեղծագործ աշխատանքը ապահովելու համար պետք է ունենալ ռազմական, ինքնապաշտպանական խիզախություն: Այս խորիմաստ բանաձևը կա տարբեր

ժողովուրդների բանահյուսություններում: Հանճարեղ կինոռեժիսոր Սերգեյ Փարաջանովը այդ իմաստությունը պատկերել է իր ֆիլմերից մեկում՝ Սուրամի ամրոցի շինությունը նկարելիս.պատը կանգուն է մնում , երբ նրա մեջ կենդանի-կենդանի շարում են երիտասարդ մարդուն: Սա, իհարկե, խորհրդանիշ է, և որպես այդպիսին՝ անձնազոհության մարմնացում է ներկայացնում, խորհրդանիշի բացատրությունը ավելի քան պարզ է և իմաստալից. ոչ մի մեծ նախաձեռնություն չի կարող իրականանալ առանց թանկ զոհողությունների:

Մեր էպոսում կա երկրագնդի բոլոր մարդկանց ուղղված մի պատգամ, այն է՝ սիրիր քո հայրենիքը , բայց հանդուրժիր, որ օտարն էլ իր երկիրը սիրի, մի թող օտարին, որ նվաճի քո հողը, լուծ դնի քո վրա, սակայն նույնը դու երբեք մի արա, սիրիր օտարին հարևանությամբ, բարի դրացիության ազնիվ սկզբունքով[1]: Այս առումով «Սասնա ծռերը» իր պատգամներով բացառիկ է աշխարհի վիպերգերի մեջ: Մարդասիրական այս պատգամները էպոսում հղվում են արաբ ծերունու և Սասունցի Դավթի փոխհարաբերությունների միջոցով:

էպոսում հայ ժողովուրդն իր ազգային բնավորության գծերը մարմնավորել է Սասունցի Դավթի կերպարում: Բոլոր ազգերի էպոսների գլխավոր հերոսները հավաքական կերպարներ են, նրանցում խտացած են ամեն մի ազգի բնավորության լավագույն գծերը:

Դավթի կյանքն էպոսում պատկերված է ծննդյան օրից մինչև մահը: Նա Սասնա դյուցազունների մեջ ամենահմայիչն է, ամենատեսանելին, ամենագեղեցիկը: Դավթի մանկությունն իր մանրամասներով շատ հետաքրքիր է: Ծնված պահից որբացած Դավիթն իր մանկությունն անց է կացնում օտարության մեջ՝ Մըսրում: Նա, սակայն, սնվում է Սասունից բերված յուղով ու մեղրով: Դավիթը հրաշապատում հեքիաթի հսկայի նման արագ մեծանում է, հզորանում, սակայն միաժամանակ նա իսկական միամիտ երեխա է, որին դեռևս անծանոթ են կյանքի մեծ ու մանր նենգությունները: Ուժի կողքին Դավիթն ունի մի կարևոր բնավորության գիծ՝ ազատատենչ է, բռնակալին ենթարկվել չգիտի, նա չի անցնում Մսրա Մելիքի թրի տակով.

Դավիթ չը գնաց, չանցավ թրի տակով,
Կշտով անցավ.
Ճկութ քսվավ ի ջարդու քար՝
Քարեն կրակ էլավ:

---

[1] Ղևոնդ, Պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Արամ Տեր- Ղևոնդյանի, Երևան, 1982, էջ 111,

Ժողովուրդը Դավթի մեջ շեշտել է նրա բացառիկ առաքինությունները: Դավիթն անգամ Մսրա Մելիքի նենգությունից, իրեն փոսը գցելուց հետո էլ մնում է մեծահոգի և իր առաջին զարկերը զիջում է Մսրա Մելիքի մորն ու քրոջը՝ հիշելով մանկության օրերին նրանց խնամքը իր նկատմամբ:

Դավիթը սիրված անձնավորություն է, որովհետև ինքն էլ սիրում է իր հայրենակիցներին, մարդկանց: Նա գիտի հարգել մեծերին. ուշադիր լսում է արաբ ծերունու , արտատեր պառավի խորհուրդները:

Էպոսն ունի դաստիարակչական նպատակներ. այն ուզում է իր ազնվագույն երազանքներով շտկել կյանքի ստվերոտ կողմերը, տարբեր ժողովուրդների միջև հաստատել բարիդրացիություն:

Էպոսի հարստությունից են կին հերոսների կերպարները: Ծովինարը՝ առաջինն այդ կերպարների մեջ, հանդես է գալիս հայրենի սրբությունների նկատմամբ իր շեշտված վերաբերմունքով: Արտասովոր կանայք են Արմաղանը, Խանդութը, Գոհարը: Կին հերոսներից ուշագրավ է արտատեր պառավը, որն իր մեջ ամփոփում է հայ կնոջ դարավոր իմաստությունը: Նա ժողովրդի մշտարթուն ոգու կրողն է, իր ազգային հերոսին ոգևորող ժողովրդի մարդը[1]: Այսպիսի կանանց համար ազգային հերոսը վեր է ամեն ինչից , նրանք ազգային հերոսներ արարողներն են՝ բոլոր ժամանակների համար:
Մեր ազգային հերոսներն ունեն ընդհանուր գծեր, սակայն նրանք խորապես անհատականացված կերպարներ են: Երբեք չի կարելի շփոթել Սանասարին Մեծ Միհրի, Դավթի և Փոքր Միհրի հետ: Նույն կերպ անհատականացված են նաև կին հերոսները:

«Սասունցի Դավիթ» էպոսը մեկնաբանելիս Հ.Օրբելին «Նախաբանում» համառոտ ներկայացնում է այն երազանքները, որոնք հայ ժողովուրդը դրել է ազգային էպոսում: Էպոսի դյուցազունները մերժում են նվաճողական պատերազմ հրահրողներին և նրանց ողջ պայքարը հենց նման զավթիչների դեմ է, էպոսի գլխավոր հերոսը «ջերմ ու անաղարտ սիրտ ունի», օգնում է բոլոր անպաշտպան մարդկանց ու սխրագործություններ է կատարում հանուն իր հայրենիքի ու ժողովրդի բարօրության[1]:
Քանի որ տարրական դասարաններում էպոսի հերոսներից միայն Դավթին են ծանոթ , մենք չենք անդրադառնա մանրամասնորեն մնացած կերպարներին և կանգ կառնենք այս կերպարի վրա և հետազոտելով ցույց կտանք, թե ինչպես նրա կերպարի միջոցով սովորողների մեջ սերմանել հայրենասիրություն և ազգային արժեհամակարգ:

---

[1] Հ. Օրբելի, Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1961, էջ 64,

ԳԼՈՒԽ 2

ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԺԵՀԱՄԱԿԱՐԳԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄ ԷՊՈՍԻ ԿԵՐՊԱՐՆԵՐԻ ՄԻՋՈՑՈՎ:

Խթանման փուլ

ա Ուսուցիչը գրատախտակին գրում է՝ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ: և հարցնում , թե արդյոք գրատախտակին գրված անունը կարդալուց հետո նրանց մտքում ծագած առաջին բառը որն է:

աշակերտներին ժամանակ չի տրվում:: Նրանք արագ պիտի ասեն գրատախտակին գրված ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ մեկնաբառին զուգորդում առաջացնող բառերը: Ուսուցիչը լսում է բոլորին, բայց միայն գրում է արտասանած առաջին երկու բառերը: Դրանք մեր պարագայում եղան ՀԱՅ և ՔԱՋ բառերը:



Այնուհետև մենք առաջարկեցինք ասել այդ երկու բառերից յուրաքանչյուրի վերաբերյալ ծագած առաջին երկու բառերը::

Դրանք ևս գրում ենք գծապատկերի երկու վանդակներում: Հայ բառին զուգորդում են մարդասեր և ազգասեր բառերը, իսկ քաջ բառին ուժեղ և անհաղթ բառերը: Այնուհետև աշակերտներն արագությամբ ասում են մեկական բառ, որոնք զուգորդում են առաջացնում վանդակներում գրված բառազույգերին՝ ժողովուրդ, հերոս (բազմանիստը սկսում է փակվել): Ուսուցչի օգնությամբ աշակերտները զուգորդում են հերոս և ժողովուրդ բառերը մեր ազգի հետ և բազմանիստը փակում ազգ բառով: Ստացվում է այսպիսի գծապատկեր.



Այնուհետև ուսուցիչն առաջարկում է միավորել Սասունցի Դավիթ և ազգ բառերը և դրանք գործածել նախադասությունների մեջ:

Բացի ԲԱՁՄԱՆԻՍՏ-ից անդրադառնանք նաև մեր կիրառած մնացած մեթոդներին:

Վեննի դիագրամ

Վեննի դիագրամը կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով, որոնք հատման մեծ մակերես ունեն կենտրոնում: Այս դիագրամը կարելի է օգտագործել գաղափարները միմյանց հակադրելու կամ դրանց ընդհանրությունները ցույց տալու նպատակով: Եթե փորձենք համեմատել Վեննի դիագրամը T-աձև աղյուսակի հետ, ակնհայտ կլինի, որ Վեննի դիագրամով հստակ առանձնացվում և կարևորվում են երկու (երեք...) հասկացությունների ընդհանրությունները և շեշտվում են յուրաքանչյուրի բնորոշ առանձնահատկությունները:

Սա ևս անհատապես կամ խմբով (հաճախ ավելի արդյունավետ է՝ զույգերով) կատարվող վարժություն է, որը տեղեկատվության մեծ և մանրամասն պաշար չի պարունակում, չնայած կարևոր է նշել այն հանգամանքը, որ ընդհանրություններն ու առանձնահատկությունները նշելիս սովորողներից պահանջվում է ընդգրկուն ձևակերպումներ գրառել: Երբեմն դիագրամի շրջանաձև տարածքները կամ ընդհանրությունների համար նախատեսված հատման մասերը չեն բավարարում մտքերը լիարժեք գրի առնելու համար: Սա չպետք է խանգարի ծնունդ առած բոլոր մտքերը գրանցելուն: Այս դեպքում Վեննի դիագրամը կարող է փոքր ինչ այլ գծապատկերով հանդես գալ: Ասենք՝ այսպիսի.



Վեննի դիագրամը կարող է ունենալ ինչպես պարզ կառուցվածք երկու հասկացության համեմատության համար, այնպես էլ՝ բարդ երեք - չորս հասկացությունների համեմատության համար: Այն կարևոր համակարգող դեր ունի և օգտագործվում է դասի ամփոփիչ փուլերում, նյութի ընդհանրացման և ամփոփման նպատակով և կիրառելի է բոլոր առարկաների համար: Մենք կիրառեցինք ներկայացնելու համար մեր էպոսի բոլոր կերպարներին և նրանց միմյանց հետ համեմատելու նպատակով:

Քառաբաժան

Հետաքրքիր մեթոդական հնար է, որը հարմար է հատկապես տեքստի հետ աշխատելիս: Քառաբաժանը շատ մեթոդական հնարների նման կարելի է կիրառել մեծ կամ փոքր խմբերով կամ անհատական աշխատանք կատարելիս: Աշխատանքը սկսելու համար անհրաժեշտ է մաքուր թուղթ (գրատախտակ...), որն անհրաժեշտ է բաժանել չորս մասի: Քառաբաժանը հիմնականում գրավոր աշխատանքի ձև է, քանի որ անհրաժեշտ է մտքերը համապատասխանաբար գրառել չորս բաժիններից յուրաքանչյուրում: Ստորև ներկայացված է քառաբաժան աղյուսակի երկու ձև: Բաժինների հանձնարարությունները պատահական չեն ընտրված, դրանք համապատասխանում են նյութի ընկալման և մտքի զարգացման ընթացքին, հետևաբար, նպատակահարմար չէ դրանք փոփոխել: Կարելի է, իհարկե, դրանք զարգացնել՝ նկատի ունենալով ընկալման և մտածողության մակարդակները, օրինակ՝ ըստ Բլումի դասակարգման.

Ա)
1. Ի՞նչ էիք տեսնում պատմվածքը կարդալիս:
Զգայություններ.
տեսողական
լսողական
զգացողական
համի և հոտի
2. Ի՞նչ էիք զգում պատմվածքը կարդալիս:
վերաբերմունք
հույզեր
զգացմունքներ
3. Կապը ձեր և իրական կյանքի հետ:
ասոցիացիաներ
առնչություններ
օրինակներ
4. Նոր վերնագիր:
ընդհանրացում
վերաիմաստավորում
գնահատում
Բ)
1. Ի՞նչ ձայներ լսեցիք:
2. Պատմվածքի տրամադրությունը
3. Երկու բանալի բառ:
4. Պատմվածքի թեման՝ սեփական բառերով:

Քառաբաժան աղյուսակի վերը ներկայացված երկու ձևերը նպատակահարմար է լրացնել՝ ըստ համարակալման: Անհատական աշխատանքի դեպքում զույգերն իրենց գրառումները ներկայացնում են միմյանց, ապա ողջ թիմին: Զույգի կամ թիմի ընտրությամբ աշխատանքը ներկայացվում է նաև ամբողջ դասարանին: Հնարավոր է, որ ըստ ուսումնասիրվող նյութի կարևորվի տեքստի, պատմվածքի կամ նյութի դիտարկումը

որոշակի տեսանկյունով, ինչը կնպաստի, որ հատկապես ուշադրություն դարձվի քառաբաժնի այս կամ այն հատվածի գրառումների վրա, որոնք հատուկ պետք է առանձնացնել, ներկայացնել և քննարկել: Հարկ է նշել, որ քառաբաժանը նպատակահարմար է օգտագործել դասի կշռադատման փուլում:

Հեղինակի աթոռ

Այս մեթոդը կիրառվում է դասի կշռադատման փուլում: Այն հնարավորություն է տալիս սովորողներին ինքնադրսևորվելու, նրանց մեջ մեծացնում է պատասխանատվության զգացումը, սեփական խոսքը ներկայացնելու կարևորության գիտակցումը: Միաժամանակ մեծ խթան է ստեղծագործական մտքի զարգացման համար:

Յուրաքանչյուր սովորող իր գրած նյութը, հանձնարարությունը ներկայացնում է ոչ թե տեղից, այլ դասասենյակի կենտրոնում դրված աթոռին նստած, որի վրա գրված է «Հեղինակ»: Հեղինակի աթոռին նստելը պաշտոնական հնչեղություն է տալիս նրանց խոսքին: Միևնույն ժամանակ, այն նպաստում է սեփական խոսքին հետևելուն, խոսքի արժեքը գիտակցելուն: Մենք հանձնարարեցինք ներկայացնել Դավթի կերպարը, պատասխանելով մի քանի հարցերի,

Քեզ դու՞ր է գալիս Սասնա Դավթի կերպարը, ինչո՞վ է նա առանձնահատուկ, կցանկանայի՞ր նմանվել նրան , նրա ո՞ր քայլերն են քեզ դուր գալիս:

m-աձև աղյուսակ

m-աձև աղյուսակը ևս գծագրական դասակարգիչ է, կառուցվածքով T-աձև աղյուսակի մեկ այլ տարբերակ, որը միևնույն հասկացության, խնդրի վերաբերյալ երեք տարբեր վերաբերմունք (դրական, բացասական, չեզոք) արտահայտելու հար-մար միջոց է: Այն նույնպես կարող է կիրառվել անհատապես կամ խմբով աշխա-տելիս: Սա երեք բաժնից կազմված աղյուսակ է, որտեղ գրանցվում են միևնույն հասկացության, խնդրի վերաբերյալ դրական, բացասական կամ չեզոք դիրքորո-շումները, բերվում են անհրաժեշտ փաստեր, տվյալներ և հիմնավորումներ: Աղյու-սակի այս ձևը շատ հարմար է քննարկումների ժամանակ երեք տարբեր պա-տասխանների (այո/ոչ/չգիտեմ, կողմ/դեմ/ձեռնպահ) կամ համադրություն/հակադրություն/չեզոք վերաբերմունք արտահայտող արձագանքների գրառման համար:

Օրինակ, աշակերտները կարող են ևս մեկ անգամ անդրադառնալ T-աձև աղյուսակում ամփոփված խնդրին և վերանայել իրենց վերաբերմունքը՝ երկու բևեռներից բացի մի երրորդ՝ չեզոք դիրքորոշմամբ դիտարկելով այն:

Դրական կողմեր **Չեզոք կողմեր** **Բացասական կողմեր**

m-աձև աղյուսակը արդյունավետ է դասերի տարբեր փուլերի ընթացքում և տարբեր առարկաներ ուսումնասիրելիս: Այն կարող է գործածվել թե' անհատական աշխատանքի, թե' խմբային քննարկումների ժամանակ:

ԳՈՒՍ (Գիտեմ – Ուզում եմ սովորել – Սովորել եմ)

ԳՈՒՍ մեթոդի կիրառման ժամանակ անհրաժեշտ է կազմել երեք սյունակից բաղկացած մի աղյուսակ: Աղյուսակի վերևում գրվում է նյութի հիմնական խորագիրը, ապա գծվում են երեք սյունակները՝ համապատասխան վերնագրերով.

օրինակ՝

ՍԱՍՆԱ ԾՌԵՐ կամ ՍԱՍՈՒՆՑԻ ԴԱՎԻԹ

-Գիտեմ -Ուզում եմ սովորել -Սովորել եմ

Նյութի ուսումնասիրության ամբողջ ընթացքում այս աղյուսակը կարող է դառնալ սովորողների ուղեցույցը: Ուսուցիչը կարող է այն գծել մեծ թղթի վրա, գրատախտակին կամ էլեկտրոնային գրատախտակին:

Քայլերը.

1. ԳՈՒՍ աղյուսակի վերևում գրվում է թեմայի վերնագիրը: Սովորողներին հարց է ուղղվում, թե ինչ գիտեն տվյալ թեմայի վերաբերյալ: Նրանց ասածները գրանցվում են աղյուսակի առաջին (Գիտեմ) սյունակում:
2. Սովորողներին կրկին հարց է տրվում, թե ինչ կցանկանային իմանալ և ինչ հարցեր ունեն տվյալ թեմայի հետ կապված: Դրանք գրանցվում են աղյուսակի երկրորդ (Ուզում եմ սովորել) սյունակում:
3. Սովորողներն ուսումնասիրում են դասի նյութը և փորձում գտնել իրենց նախնական հարցերի պատասխանները, ապա լրացնում են աղյուսակի երրորդ սյունակը (սովորել եմ):
4. ԳՈՒՍ աղյուսակն ամբողջովին լրացնելուց հետո սովորողներին կարելի է հանձնարարել կազմել գաղափարների քարտեզ:

Մեթոդի առավելությունները.

- ուսուցչին հնարավորություն է տալիս պատկերացում կազմել տվյալ նյութից սովորողի նախնական գիտելիքների մասին,
- սովորողներն անմիջականորեն առնչվում են ուսումնասիրվելիք նյութին, հնարավորություն են ստանում ենթադրություններ կատարելու,
- զարգանում են սովորողների ինքնավերլուծական կարողությունները, նրանք առավել ուշադրությամբ են կարդում, ուսումնասիրում նյութը՝ թեմային առնչվող իրենց հարցերի պատասխանները գտնելու համար:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դպրոցը, ուսուցիչները, ծնողները պարտավոր են ձևավորել երեխաների հայրենասիրական զգացմունքները: Պարտավոր են նրանց մեջ սերմանել հոգատար վերաբերմունք հայրենիքի պատմության, մշակույթի, հայրենիքում ապրող հարազատ ժողովրդի, ազգի ավանդույթների, սովորույթների նկատմամբ:

2. Անկախ տարիքից , հասարակության մեջ պետք է սեր դաստիարակել հարազատ վայրերի , իրենց գյուղի, ավանի, քաղաքի, հայրենի բնաշխարհի նկատմամբ: Դաստիարակել հայրենիքը պաշտպանելու պատրաստակամություն, փաստացի օրինակներով երեխաների մեջ ամրապնդել սերը ժողովրդի նկատմամբ:

3.Հայրենասիրության և ազգային արժեհամակարգի ձևավորման գործում մեծ է էպոսի կերպարների անձնական օրինակը:

4. Մայրենի լեզվի ուսուցիչը կոչված է լուծելու կրթական առաջնահերթ խնդիրներ.
5. Ճիշտ մեթոդների ընտրությունից է կախված դասի արդյունավետությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ղևոնդ, Պատմություն, Թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Արամ Տեր- Ղևոնդյանի, Երևան, 1982,

Սրվանձտյանց Գ., Երկեր, հ.1,Երևան, 1978,

Օրբելի Հ., Հայկական հերոսական էպոսը, Երևան, 1961,